




ՀՐԵԱԿԱՆ ԳԵԹՈՅԻ* ԱՎԵՏԱՐԱՆԸ

Ժան Պիեռ Օզիեն 1984 թվականին Փարիզում հրատարակեց «Հրեական գեթոյի Ավետարանը կամ ինչպես էին հրեաները միմյանց պատմում Հիսուսի մասին»¹ խորագիրը կրող մի գիրք հետևյալ ենթավերնագրով «Հիսուսի հրեական լեգենդը Բ-ից Ժ դար»:

Ո՞վ էր Հիսուս հրեական գեթոյի Ավետարանի տեսանկյունից. վաղ թե ուշ այդ հարցը պիտի տրվեր: Ողջ միջնադարի ընթացքում ուաբբիներն ու քրիստոնյաները փորձում էին գտնել իմաստուն պատասխաններ: Այսպիսով ծնվեցին Հիսուսի կյանքի պատումները, որոնք պատմվեցին բերներեբան, մինչև որ գրի առնվեց ու խմբագրվեց:

«Հրեական գեթոյի» գրությունները Հիսուսին ներկայացնում են գայթակղեցուցիչ կերպարանքով, հաճախ ինքնատիպ, իր տեսակի մեջ երբեք չհայտնաբերված:

Հեշտ է նկատել գրությունների որոշ իմաստով երգիծական բնույթը, թեպետև նրանցում նկատելի են ավանդական հրեա-

կան լեգենդներ և թալմուդյան հիշողություններ:

Հրեերեն և արամերեն բնագրերից թարգմանված այդ գրությունները հեղինակը իր գրքում դասավորել է հետևյալ վերնագրերի տակ.

Վիեննայի ձեռագիր. — Պատմություն մոր և իր որդու մասին:

Ստրասբուրգի ձեռագիր. — Պատմություն Նազովրեցի Հիսուսի:

Վագենսեյի մեկնաբանություն. — Գիրք Հիսուսի պատմության:

Հյուլդրեխի մեկնաբանություն. — Նազովրեցի Եշուահի պատմություն:

Կահիրեի Գենիզահի ձեռագիր. — Հիսուսի պատմություն:

Սեբեր Յոսիպոն. — Քրիստոնեության ըսկիզբ:

Հապավված դասեր Թալմուդից և Միդրաշից:

Ժ դարում խմբագրված այդ գրությունները հրեական պատասխաններ են, բնութթով հականառական, որոնք կառուցված են կանոնական Ավետարանների զավեշտական նմանողությամբ:

Կանոնական Ավետարանների նման, նը-

* Քաղաքի այն թաղամասը, ուր մեկուսացված ապրում էին հրեաները:

¹ Jean-Pierre Osie.—L'Evangile du Ghetto ou comment les juifs se racontaient Jésus. L' Autre Rive, Berg International.

րանք նույնպես ներկայացնում են ընդհանուր պատկերը. ծնունդ, մանկություն, կյանքը հանրության մեջ, դատավճիռ, մահապատիժ, հարություն և եկեղեցու հիմնադրում:

Բայց «հրեական գեթոյի» գրությունները պատմում են գործողությունների մի ուրիշ մեկնաբանություն: Նրանք, հենվելով Թալմուդից փոխառնված շատ հին ավանդությունների վրա, տալիս են իմաստային նոր նշանակություն: Վերցնելով ավանդական բեկորներ, նրանց տալիս են ավետարանական ձև: Եվ ահա Հիսուսի հրեական կյանքի մի նմուշ և, ինչո՞ւ չէ, մի հրեական Ավետարան, ավելին՝ հակա-ավետարան: Թեպետև ոչ մեկը գաղափար չունեցավ դրանք պարականոն ավետարանների շարքը դասել:

Զարմանալի է, որ գրությունները առաջին անգամ տպագիր վիճակում տարածել են ո՛չ թե հրեաները, այլ՝ քրիստոնյաները: Առաջին տպագրությունները կատարվել են բողոքականների կողմից:

Այդ գրություններում բացակայում է հարգանքը սրբության և խորհուրդի նկատմամբ, նրանք բացահայտում են խորհրդավորությունը սրբապղծության ձևով: Պետք է նշել, սակայն, մի կարևոր հանգամանք: Ելնելով հրեական տեսանկյունից, նախ և առաջ հրեաները չեն ընդունում Ավետարանը որպես սուրբ գրություն և երկրորդ՝ գրությունները չեն հենվում սրբազան պատմության և նրա ըմբռնումների վրա: Ահա թե ինչո՞ւ քրիստոնյաները այն ընդունում են որպես հրեական հակա-ավետարան: Հրեական պատմագրությունը սրբությունը ընդունում է որպես Աստուծո շարունակական միջամտություն իրադարձությունների վրա, օր-օրի, և այդ սկսյալ Արարաչագործության առաջին օրվանից, այն գործունեությամբ, որը հենվում է հրեաների հարազատության վրա Աստուծո հետ կնքված ուխտերի հանդեպ:

Այդ առումով Թորայի պատվիրանների պահպանումը նկատվում է որպես հաջողության արդյունք: Չարիքը, որ հաճախ ներկայանում է որպես տարագրություն և ցրվածություն, առաջ է բերում զանցառու-

թյուններ հանդեպ պատվիրանների:

Այդ պայմաններում քրիստոնեության ծագումը նկատվում է որպես հետևանք պատվիրանների մոռացության և, վերջապես, երկնային պատժի: Այդպիսի միտումը բընավ էլ բացակա չէ գրությունների մեջ: Անուրանալի է, որ գրությունները ունեն պիղծ հակապատասխան Հիսուսի պատմության. այն, որ գոյություն է ունեցել իրականում այնպիսին, ինչպիսին պատմվում է համատեսների կողմից, առավել՝ Հովհաննեսի: Գրությունները, զերծ մնալով հրեական պատմության աստվածաբանական հենքից, ներկայանում են աշխարհիկ բնութագրությամբ:

Այդ առումով մեր նպատակից դուրս է համեմատության մեջ դնել Ավետարանական գրությունները հրեական գրությունների հետ. համեմատել նրանց միջև եղած տարբերությունները և նմանությունները, վեր հանել Հիսուսի պատմական անձնավորության և նրա Աստուծո Որդի լինելու հանգամանքները ըստ գրությունների:

Մեր եկեղեցու տեսանկյունից դիտված սույն գրքում տեղ գտած երկու ձեռագրեր վկայում են Հայոց Եկեղեցու առաքելականության մասին:

ա) Manuscrit de Vienne: Histoire de la mère et de son fils.

(Վիեննայի ձեռագիր.— Պատմություն մոր և իր որդու մասին):

բ) Manuscrit de Strasbourg: Histoire de Jésus de Nazareth.

(Ստրասբուրգի ձեռագիր.— Պատմություն Նազովրեցի Հիսուսի):

Գրություններում տեղ գտած Հայ Եկեղեցու Առաքելականությունը՝ վկայող փաստերը հետևյալներն են.

ա) Ըստ Վիեննայի ձեռագրի՝

„Parmis les douze disciples, trois se rendirent en Arménie...“²

«Տասներկու աշակերտներից երեքը փոխադրվեցին Հայաստան...»

² Նշվ. աշխ., էջ 57:

բ) Ըստ Ստրասբուրգի ձեռագրի՝

„Les disciples de Yeshuh prirent la fuite et se disperserent: trois d'entre eux dans les monts Ararat, trois en Armenie...“³.

«Եշուահի աշակերտները բռնեցին փախուստի ճամփան, և ցրվեցին, նրանցից երեքը Արարատ լեռները, երեքը՝ Հայաստան...»

³ Տե՛ս Գույնը, էջ 78—89:

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

